ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ՝ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Հայրապետյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Լիտվայի Հանրապետություն՝ ք. Վիլնյուս, 2026թ. ապրիլի 12-ից 14-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Լիտվայի Հանրապետության էներգետիկայի նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2024 թվականի ապրիլին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ Լիտվայի Հանրապետություն այցի շրջանակներում ձեռքբերված պայմանավորվածության համաձայն, էլեկտրաէներգիայի պահեստավորման կայանների շրջանակներում Լիտվայի փորձին, տեխնոլոգիական նորարարական լուծումներին և դրանց կիրառմանը ծանոթանալու համար:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Գործուղման շրջանակներում ծանոթացել եմ Լիտվայի Հանրապետության էներգետիկայի փոխնախարարի գլխավորած պատվիրակության հետ, նրանց կողմից ներկայացվել է Լիտվայի էներգահամակարգի կառուցվածքը, զարգացման հեռանկարները: Ծանոթացել եմ էլեկտրաէներգետիկական ոլորտի ընկերությունների պահեստավորման կայանների արդիականացմանն ուղղված մրջոցառումներին նրանց կողմից ձեռնարկվող քայլերին ու առաջարկվող տեխնոլոգիական նորարարական լուծումներին և դրանց կիրառման հնարավորություններին:

7. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Կազմակերպվել է այց էլեկտրաէներգիայի կուտակիչ կայան, որտեղ ծանոթացել եմ կայանի կառուցվածքին և կառավարման համակարգերին:

Հայաստանի պատվիրակությունը ներկայացրել է Հայաստանի էներգետիկ համակարգը՝ ջերմային և հիդրոէլեկտրակայաններ, ատոմային էլեկտրակայան և հողմային էլեկտրակայան, զարգացող արևային կայաններ և վերջինիս տեսակարար կշիռը վերականգնվող էներգետիկայում:
Ծավալված քննարկումների ժամանակ առաջարկվել են հետաքրքիր և միևնույն ժամանակ բավականաչափ կիրառելի լուծումներ, փոխանակվել են ոլորտային արժեքավոր գիտելիքներ: Քննարկվել են էներգետիկայի բնագավառում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող համագործակցային այլ հարցեր:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների արդյունքներով փաստաթուղթ չի ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Առաջարկվում է զարգացնել փոխշահավետ գործընկերային հարաբերություններ: Լիտվայում կառուցվել են չորս կուտակիչ կայաններ, որոնք ինտեգրված են էներգահամակարգում, սակայն չեն մասնակցում էլեկտրաէներգետիկական շուկային: Մոտ ապագայում՝ Հայաստանում կուտակիչ կայաններ ունենալու պարագայում, առաջարկվում է քննարկել համագործակցության հեռանկարները՝ կուտակիչ կայանների էլեկտրաէներգետիկական շուկայում ինտեգրելու լիտվական փորձին ծանոթանալու նպատակահարմարության հարցը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Ստորագրող
ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
2703870612

2026-04-17 17:40:29 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՅԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«17» ապրիլի 2026թ.